Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
դեկտեմբերի 5-ի N 1912-Ն որոշման

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ

1. Սույն կարգով սահմանվում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների տարակարգ ստացած դասախոսի, վարպետի և հրահանգչի (այսուհետ՝ մանկավարժ) հավելավճար սահմանելու կարգը:

2. Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով տարակարգ ստացած մանկավարժներին ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին սահմանվում է հավելավճար երեք տարի ժամկետով՝

1) երրորդ աստիճանի տարակարգի համար՝ մանկավարժական աշխատավարձի նկատմամբ 50 տոկոսի չափով.

2) երկրորդ աստիճանի տարակարգի համար՝ մանկավարժական աշխատավարձի նկատմամբ 30 տոկոսի չափով.

3) առաջին աստիճանի տարակարգի համար՝ մանկավարժական աշխատավարձի նկատմամբ 20 տոկոսի չափով:

3. Ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած մանկավարժական աշխատողի հասանելիք հավելավճարը սահմանվում է յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին:

4. Համատեղությամբ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական այլ ուսումնական հաստատությունում դասավանդելու դեպքում տարակարգ ստացած մանկավարժին հավելավճար տրամադրվում է նաև տվյալ հաստատությունում:

5. Հանրային և մասնավոր ՄՈՒՀ-երի մանկավարժական աշխատողը կարող է լիազոր մարմնի սահմանած կարգով մասնակցել տարակարգի շնորհման գործընթացին ՄՈՒՀ-ի կամ սեփական և այլ ֆինանսական միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ